ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

Ա. ՋԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառագիտության պատմության մեջ նշանակալից է 1909 թվականը, երբ Հ. Աճառյանը շարադրեց հայ բարբառների առաջին գիտական դասակարգումը[1]: Հ. Աճառյանը, հիմք ընդունելով բայերի ներկայի կազմությունը, բարբառները բաժանեց երեք ճյուղերի: Այդ դասակարգման սկզբունքները համապատասխանում էին մեր բարբառների ուսումնասիրության այն մակարդակին, որի վրա գտնվում էր հայ բարբառագիտությունը, և միաժամանակ հնարավորություն էին տալիս խորացնելու բարբառների ուսումնասիրությունը: Աճառյանի դասակարգմամբ արդեն «ազգակից» բարբառներն ընկնում էին միևնույն խմբի մեջ, ըստ որում երևան էր գալիս ամեն մի բարբառի նմանությունը իր «ազգակցին» և տարբերությունը իր «ազգակցից», ինչպես և՝ միևնույն բարբառի տարբերությունները «ոչ-ազգակից» բարբառներից և նմանությունները նույնին:

Այս հանգամանքն օգնում էր մոտիկից ճանաչելու բարբառները, գիտականորեն վերլուծելու դրանք և ըմբռնելու նրանց էությունը: Իր դասակարգումը հիմնավորելու համար Հ. Աճառյանը 1911 թ. հրատարակեց «Հայ բարբառագիտություն» խորագիրը կրող աշխատությունը, որտեղ ներկայացրեց 31 բարբառների համառոտ նկարագրությունը համապատասխան տեքստերով: Այդ գիրքը ամբողջապես հիմնավորում էր հեղինակի դասակարգման սկզբունքները և դարձնում էր դրանք անառարկելի: Այս պատճառով շատ երկար ժամանակ հայ լեզվաբանությունը պտույտ էր գալիս Հ. Աճառյանի դասակարգման սահմաններում և բարբառները քննության առնում միայն այդ տեսակետից: Հ. Աճառյանի աշխատությունը, համոզիչ լինելով փաստերի առկայությամբ և հիմնավորումով, ավելի քան երեք տասնյակ տարի իր ազդեցության տակ էր պահում հայ բարբառագիտական միտքը:

Իրրև այդ ժամանակաշրջանում ուշադրավ մի հետազոտություն կարելի է նշել Մաքսուդյանի գործը՝ նվիրված Ակնա բարբառի քննությանը:

Մի անձ միայն թույլ փորձ կատարեց հակաճառելու Հ. Աճառյանին: Դա Գ. Տեր-Պողոսյանն էր, որը և գիտեր Հավարիկի բարբառը: Հավարիկի բարբառը չէր ենթարկվում Հ. Աճառյանի դասակարգման օրենքներին, ուստի դրդեց Գ. Տեր-Պողոսյանին համառոտ նկարագրելու այն և կասկած հայտնելու Հ. Աճառյանի դասակարգման ոպասիչ լինելու մասին:

---

[1] Classification des dialectes armeniens, Paris, 1909.

1931 թվականին նկատվեց, որ Ուրմիայի բարբառը նույնպես, ինչպես և Հավարիկի բարբառը, չի ամփոփվում Հ. Աճառյանի երեք ճյուղերի մեջ, քանի որ ներկան կազմում է «էս» կամ «աս» վերջավորության անեցող գերբայով (կ'երէս եմ, կ'արթաս եմ)։

Այս «էս» («աս») ձևի առկայությունը (կ'երես եմ, կ'արթաս եմ) բարբառներից մեկում առաջ քաշեց երկու կարևոր հարց. ա) արդյոք դա նույն «էլ» ճյուղի մի որևէ բարբառ է, թե մի առանձին ճյուղի բարբառ, բ) արդյոք հայերենի բարբառներն ունեն երեք, թե չորս ճյուղ։ Որոնումները հանգեցրին Մեղրու բարբառի հայտնագործմանը, որի ներկա. ձևերի կազմությունը ամփոփում էր իր մեջ «իս» վերջավորություն ունեցող գերբայ և օժանդակ բայ (գ'երես իմ, կարդիս իմ[1])։ Այսպիսով Ուրմիայի բարբառի կողքին երևան եկավ երկրորդ բարբառը, որն իր անկատար գերբայը կազմում էր «ս» վերջավորությամբ։ Երբ համառոտակի գաղափար կազմվեց Մեղրու բարբառի մասին, հետագայում ուսումնասիրությունները պարզեցին, որ նա միակը չէ, այլ ունի իր ճյուղակիցները, որոնք գտնվում են Մեղրու աշխարհագրական շրջապատում։ Հայանարևելյան Կարճևանի բարբառը, որն իր անկատար գերբայի վերջավորությունը կազմում է ա-ով (կ'ըրդիյ լիմ, կ'ըրդիյ լիս, կ'ըրդիյ ա... կ'ըրդիս չիմ, կ'ըրդիս չիս, կ'ըրդիս չի...)[2]։

1937—1938 թ. թ. հայանարևելյան Հադրութի բարբառը, որը լինելով Ղարաբաղի բարբառի նման, ուներ նրանից նաև շատ տարբերություններ. տարբեր է նրա հատկապես անկատար գերբայը, որը վերջավորվում է «ս»-ով (կ'ըրէս ըմ, կ'ըրէս ըս, կ'ըրէս ա...)[3]։

Այս բարբառի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Հադրութի շրջանի շուրջ 12 գյուղերի խոսվածքը, Շաղախ գյուղի խոսվածքի գլխավորությամբ, զգալի տարբերություն ունի Հադրութի մյուս գյուղերի խոսվածքներից։ Այդ հարցը տեղում ստուգվելուց հետո պարզվեց, որ Շաղախի բարբառն էլ անկախ բարբառ է։

Հ. Աճառյանի հայ բարբառագիտության դրքում «էլ» ճյուղի մեջ զետեղված է նաև Արդվինի բարբառը. բերված է նաև մի տեքստ, սակայն սուղ ծանոթությունն այդ բարբառին պարզեց, որ նա իր ներկան կազմում է «ս» վերջավորություն ունեցող անկատար գերբայով։ Բարբառի մանրամասն նկարագրությունը տրվեց այն ժամանակ, երբ գտնվեցին արդվինցիներ Բաթումի քաղաքում, որտեղ տեղացիների օգնությամբ վերջնականապես պարզվեց նաև Արդվինի բարբառի նկարագիրը։ Այսպիսով Ուրմիայի բարբառը առիթ դարձավ փնտրելու նրան ազգակից բարբառներ, և չորս տարվա որոնումները հանգեցրին ամբողջ մի «Ս» ճյուղ հայտնաբերելու պատեհությանը[4]։

Սակայն դրանով չդադարեցին այս բարբառաճյուղի որոնման աշխատանքները։

Բարեկը կազմելիս նկատվեց, որ «Ս» ճյուղի բազադրիչ բարբառները

---

[1] Մեղրու բարբառով առաջին անգամ 1936 թ. մեզ ներկայացրել է մի տեքստ Մանկավարժական ինստիտուտի նախկին ուսանողուհի Ջավահիր Վաչյանը, իսկ բարբառի ուսումնասիրությանը օգնել է նրա հայրը՝ Դավիթ Վաչյանը։

[2] Կարճևանի բարբառի ուսումնասիրությանը նպաստել է Պապիկ Կարապետյանը մի չորք կարճևանցիների հետ միասին։

[3] Հադրութի բարբառի ուսումնասիրությանը նպաստել են Ա. Պողոսյանը (այժմ դոցենտ) և Հ. Սարգսյանը։

[4] Տե՛ս «Հայ բարբառների մի նոր ճյուղ», Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. II, 1939։

իրենց հիմնական մասով ընկած են Արաքսի ձախ, սովետական ափին և կազմում են մի բարակ առափնյա շերտ Գողթանից մինչև Հաղբատ: Ըստ որում նկատվեց նաև, որ այս բարբառաճյուղին իր հատկանիշների հիմնական մասով, բացի անկասար դերբալից, պատկանում է նաև Ագուլիսի բարբառը: Այդ ճյուղին ավելի մոտ են Ագուլիսի բարբառի ենթաբարբառները: Ուստի և պահանջ առաջացավ եզրակացնելու, որ այդ բարբառաճյուղի աշխարհագրական դասավորությունը սկսվում է Գողթանի շրջանից: Բնականորեն միտք առաջացավ, թե Արաքսի մյուս ափին գտնվող հայերը, ասել է թե՝ նախկին Փայտակարանի (?) բնակիչները, պետք է որ այդ բարբառաճյուղին մոտ խոսվածքներով խոսեն: Ուստի այնտեղ ևս որոնումներ կատարվեցին: Դեռևս 1941 թվականին նկատվել էր, որ Արաքսի պարսկական ափի (Ղարադաղի) հայ խոսվածքների և նոր հայտնաբերված «Ս» ճյուղի միջև ինչ-որ նմանություն կա, և ահա, ութ տարվա որոնումների հետևանքով պարզվեց, որ Արաքսի աջ ափի հայ գյուղերի խոսվածքները պատկանում են «Ս» ճյուղին[1]:

Դրանց մեջ որոշակի տարբերակվում էին երեք խոսվածքախմբեր՝ մեկը Խանդաղի և նրա շրջապատի խոսվածքախումբը, որ կոչվեց «Ղարադաղի բարբառ» անունով, մյուսը՝ Դզմարի և նրա շրջապատի խոսվածքախումբը, որ կոչվեց «Դզմարի բարբառ», և երրորդը՝ Բելվանի ու նրա շրջապատի խոսվածքախումբը, որ շատ նման էր Շաղախի բարբառին, ուստի կոչվեց «Բելվան—Շաղախի բարբառ»:

Որոնումներին առիթ դարձավ ամենից առաջ ոչ թե սոսկ ենթադրությունը, այլ այն, որ Հաղբատի շրջանում գտնվող Շաղախի բարբառով խոսողները իրենց կոչում էին «զըրզըկեցիներ», այսինքն՝ դարագաղցիներ: Այդ նշանակում էր, թե Արաքսի աջ ափին կան բարբառներ, որոնցից մեկը փոխադրվել էր ձախ ափը[2]:

Ինչպես տեսանք «Ս» ճյուղը, որ հայտնաբերվեց իբրև վեց բարբառից կազմված ճյուղ, այժմ հայտնի է որպես ինը բարբառներից կազմված ճյուղ[3]: Այդ բարբառախումբը շատ հետաքրքրական է, նրա ամեն մի բարբառը մի հետաքրքրական լեզվաբանական երևույթ է, այդ պատճառով էլ ամեն մեկ բարբառ ծառայում է իբրև առանձին դիսերտացիոն թեմա (այսպես, օրինակ, Մեղրու բարբառը քառասնական թվականներին մանրամասնորեն ուսումնասիրեց այժմ պրոֆ. Է. Ադալյանը և ներկայացրեց որպես թեկնածուական դիսերտացիա: Հաղբատի բարբառը ուսումնասիրեց Ա. Պողոսյանը և ներկայացրեց ու պաշտպանեց որպես թեկնածուական դիսերտացիա: Այժմ էլ Կարճևանի բարբառը մանրամասն ուսումնասիրել է Լեզվի ինստիտուտի ասպիրանտ Հ. Մուրադյանը և նույնպես ներկայացրել է իբրև դիսերտացիա):

Այսպիսով «Ս» ճյուղի բարբառների հայտնաբերումը ոչ միայն ավելացրեց հայ բարբառների ճյուղաքանակը, հայ բարբառների թիվը, այլև նպաստեց հայ բարբառագիտության զարգացմանը՝ հետաքրքրություն առաջացնելով և ներգրավելով լեզվաբաններին բարբառագիտական աշխատանքների մեջ:

---

[1] Известия АН СССР, Отделение литературы и языка, 1952, т. XI, вып. 3.

[2] Ղարադաղի բարբառների մասին տեղեկություններ հաղորդեցին երկու ղարադաղցիներ՝ ուսուցիչ Սուրեն Մինասյանը և Օնիկ Եգանյանը. նրանք ամենայն սիրով արամադրեցին իրենց մոտ եղած նյութերը և օժանդակեցին այդ բարբառներն ուսումնասիրելուն:

[3] Ֆիլ. գիտ. թեկնածու Ռ. Բաղրամյանը 1957 թվականին հայտնաբերել է «Ս» ճյուղի 9-րդ բարբառը՝ Կոզեղնի բարբառը.

Հայ բարբառների «Ս» ճյուղի հայտնաբերումը ունեցավ նաև մի այլ օգտավետ կողմ։

Նա կտրեց հայ բարբառների դասակարգման մոգական շրջանը և առաջ մղեց այն միտքը, որ հայ բարբառագիտության զարգացման ուղին այդ մոգական երեք ճյուղերից դուրս գալը և նոր ճյուղեր որոնելն է։ «Ս» ճյուղի հայտնաբերումը նպաստեց հայերենի բարբառների ձևաբանական ուսումնասիրությունների ընդարձակմանը։ Բայց որքան զարգանում է գիտությունը, այնքան ավելի մեծանում են նրա զարգացման հեռանկարները։ Կրկին անգամ ապացուցվեց, որ ոչ մի գիտական խոսք չի կարող ամենավերջինը լինել. ոչ մի գիտական հեղինակություն չի կարող սպառել գիտության բոլոր հարցերը։

Նոր ճյուղի հայտնաբերումը ներշնչում էր այն միտքը, թե հնարավոր է հայտնաբերել բարբառների նորանոր ճյուղեր, ուրեմն և որոնումները պետք է շարունակել։ 1941 թ. պարզվեց, որ Մալաթիայի բարբառը շարունակականի համար գործածում է ինչ-որ «ա» ձայնավոր (քրիմա ա, քրէի ա)։ Իսկույն պահանջ առաջացավ հետազոտելու այդ հարցը հայ բարբառների մեջ մի ենթադրությամբ, որ Մալաթիայի բարբառը իր ձևաբանական նման կառուցվածքով չի կարող մենակ լինել։ Որպեսզի կարելի լիներ պարզել, որ այդ բարբառը այլ ճյուղի ներկայացուցիչ է, պետք էր գտնել մի բարբառ, որի ոչ թե շարունակականն այս ձևն ունենար, այլ սովորական ներկան։ Հայտնի էր, որ Արարկիրի բարբառը ինչ-որ «ը» ձայնավոր է ավելացնում ներկա ձևի վրա (գրիմ ը)։ Քննությունը պարզեց, որ Արարկիրի բարբառում էլ այդ ը-ն շարունակական դադափար արտահայտելու միջոց է։

1948 թ. ձեռք բերվեցին նմուշներ Սվեդիայի և Դեսարի խոսվածքներից։ Թեթև ծանոթությունն այդ նմուշներին պարզեց, որ այդ երկու գյուղերի խոսվածքները տարբեր բարբառներ են։ Սվեդիայի բարբառը ինքնին շատ հետաքրքրական էր, ուստի կատարվեց այդ բարբառի ուսումնասիրությունը[1]։ Բայց ավելի հետաքրքրական էր Դեսարի խոսվածքը, որը ներկան կազմելու ձևերի մեջ «կը» մասնիկ չի ճանաչում։ Այդ «կը» մասնիկը գործ է ածվում միայն պայմանական կազմելու համար։ Դեսարի բարբառը իր ներկան կազմում է «հա», իսկ նրա ենթաբարբառը հանդիսացող Կալաղաբանի խոսվածքը՝ «հայ» բառ-մասնիկով։ Այսպիսով՝ որոնած բարբառը գտնվեց, ուրեմն և գտնվեց մի նոր ճյուղ, թեև այն առայժմ ներկայացված էր մեկ նոր բարբառով միայն[2]։

Բարբառագիտական հետազոտությունների փորձը վկայում էր, որ Դեսարը չի կարող մենակ լինել, որ անպայման ընկերակիցներ կունենա և «Հա» ճյուղը հայ բարբառների մեջ գոյություն ունի։ Թեև փորձ արվեց Դեսարի հետ կապելու Մալաթիան և Արարկիրը, սակայն այս երկու բարբառները այդ ճյուղին չեն պատկանում, այլ միայն օգտագործում են նրա հատկանիշը իրենց շարունակականը կազմելու համար։

1953 թ. հայտնաբերվեց «Հա» ճյուղի մի այլ բարբառ ևս՝ Եղեսիայի

---

[1] Այս, ինչպես և Դեսարի բարբառի ուսումնասիրությունը մեծապես նպաստեց ուսուցիչ Ալեքսանդր Փաշայանը։ Նրա միջոցով բազմաթիվ քեսաբցիներ հարկավոր նյութեր մատակարարեցին և օժանդակեցին բարբառի ուսումնասիրության գործին։

[2] «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 8, 1952 թ., հասարակական գիտությունների սերիա։

կամ Ուրֆայի բարբառը[1]։ Իսկ 1955 թ. հայտնաբերվեց «Հա» ճյուղի մի երրորդ, շատ հետաքրքրական բարբառ՝ Արամոյի բարբառը։ «Հա» ճյուղի գոյությունը գրանով վերջնականապես հաստատվեց։ Իսկ Սվեդիայի բարբառը, հետաքրքրական լինելուց բացի, թելադրեց այն միտքը, թե ինքը «Կը» ճյուղից տարբեր է։ Հայտնի է, որ մեր երկու խոշոր լեզվաբանները՝ Ա. Այտընյանը և Ս. Արեղյանը, տարբեր կարծիքներ են հայտնել «կը» մասնիկի ծագման մասին։ Դրանցից մեկը փորձել է բացատրել այդ մասնիկը հայերեն «գոյ» բառով, մյուսը՝ «կայ» բառով։

Սվեդիայի բարբառի ներկայի և պայմանականի մեջ գործածվում են «կը» մասնիկի երկու տարբերակներ. ներկայի համար գործածվում է «գու» (գու կրիմ), իսկ պայմանականի համար՝ «գը» մասնիկը (գը կըրիմ)։ Պարզ է, որ դրանք նշանակությամբ տարբեր լինելով՝ կարող են ծագմամբ էլ տարբեր լինել։ Հետազոտելով Զեյթունի բարբառի օրինաչափությունները, դժվար չէր պարզել, որ այդ բարբառում ներկայի մասնիկը պետք է, որ ունենար «գա» ձևը, որն իհարկե հայերեն «կա» բառն է։ Հայտնի է, որ Զեյթունի բարբառի օրենքով բաց վանկի «ա»-ն վերածվում է «ուէ»-ի, ուստի բարբառում ասվում է «գուէ կըլիմ»=գրում եմ։

Նշանակում է, այս բարբառում «կը» մասնիկի ծագումը հայերեն «կա» բառից է։ Այսպիսի որոնումները պարզեցին նաև, որ Բեյլանի ենթաշրջանի բարբառներից հատկապես Բեյլանի բարբառը նույն օրինաչափությամբ իր ներկան կազմում է «գա» մասնիկով, որևհետ այդ բարբառը ևս իր մասնիկը առաջացրել է «կա» բառից (գա գրրիմ=գրում եմ), որովհետև Բեյլանի բարբառում խուլերն արտասանվում են ձայնեղ։

Նկատի ունենալով Բեյլանի խոսվածքի մի շարք տիպիկ այլ առանձնահատկություններ ևս, Բեյլանի խոսվածքը նույնպես առանձնացվեց որպես անկախ բարբառ։

Սակայն «կա» մասնիկը՝ ներկայի կազմությանն համար սկզբնաձև համարելու նպատակով պետք է գտնվեր մի այլ բարբառ, որը, առանց հնչյունական օրենքների փոփոխության, իր ներկան կազմեր «կա» մասնիկով։ Այդպիսի բարբառ գտնվեց. դա Կեսարիայի բարբառն էր, որն իր ներկան կազմում է հետևյալ կերպ. գրհարցնիմ գա, գըհարցնիս գա, գըհարցնէ գա։ Այսպես է նաև Ամասիայի բարբառը, որն իր ներկան կազմում է «կա» մասնիկով. ճատիմ կա, ճատիս կա։

Այսպիսով, առանց տատանվելու կարելի է ասել, որ հայ բարբառներն ունեն մի անհայտ ճյուղ ևս՝ «Կա» ճյուղը, որի մեջ մտնում են Սվեդիայի, Բեյլանի, Զեյթունի, Ամասիայի և Կեսարիայի բարբառները։

Այս ձևով երևան եկավ հայերեն բարբառների վեցերորդ ճյուղը։ Եթե «Կա» ճյուղը բոլորովին ինքնուրույն է, և նրա բառամասնիկը, ինչպես վերը հայտարարվեց, առաջացել է հայերեն «կա» բառից (կամ, կաս, կա), ապա որևհետև արևմտահայ «Կը» ճյուղի բարբառների մեծագույն մասը վերաբերում են «Կը» ճյուղին (ընդամենը 24 բարբառ)։

«Կա» ճյուղի բառամասնիկը, որ ունի «կա», «գա», «գու», «գա», «գուէ» և այլ տարատեսակներ, մեր ենթադրությամբ «կամ» բայի ներկայի երրորդ դեմքն է։ Այս ենթադրությունը հաստատվեց Մարաշի բարբառում ակա

[1] Եդեսիայի բարբառի առաջին տեքստը տվել է Ե. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Մարի Քեշիշյանը, իսկ բարբառի ուսումնասիրությանը նպաստել է Եդեսիացի Հարություն Դայիրմանջյանը։

ժխտական ձևերի բառ մասնիկով, որն ունի հետևյալ պատկերը. չիքօս սիրի, չիքօս սիրի, չիքօ սիրի, չիքօնք սիրի, չիքօք սիրի, չիքօն սիրի (չկամ սիրի, չկաս սիրի, չկա սիրի, չկանք սիրի, չկաք սիրի, չկան սիրի)[1]:

Այսպիսով վերջնականապես և անժխտելի կերպով ապացուցվեց «Կա» ճյուղի գոյությունը և հատկապես «կա» բառամասնիկի ծագումը: Հ. Աճառյանի երեք ճյուղերի վրա ավելացան երեք ճյուղ ևս՝ «Ս», «Հա», «Կա»:

Այս երեք ճյուղերը երևան բերեցին բարբառային այնպիսի առանձնահատկություններ, որոնք մեր մեծ բարբառագետին ծանոթ չէին կամ թե ծանոթ էին, բայց չէին կարող առանձին ուշադրություն դրավել, որովհետև դիտվում էին «Կր» ճյուղի բարբառների ընդհանուր սիստեմի մեջ:

Նոր ճյուղերի հայտնագործումը ներշնչեց մոտեցման նոր դաղափար մեր բարբառների նկատմամբ: Պարզվեց, որ մեր բարբառները առաջացել են ոչ թե առանձին-առանձին, այլ ասոցիացիաներով: Յուրաքանչյուր ճյուղ ներկայացնում է բարբառների մի ասոցիացիա և պատմականորեն ունի որոշ տեղադրություն: Այսպես, օրինակ, «Ում» ճյուղի ասոցիացիան կենտրոնացված է եղել Այրարատում և նրա մերձակայքում:

«Ս» ճյուղի ասոցիացիան տեղադրվել է Արաքսի միջին հոսանքի երկու կողմերում՝ սկսած Գողթանից մինչև Մուղան, այսինքն՝ պատմական Գողթանում, Արևիքում, Փայտակարանում (?):

«Կա» ճյուղի ասոցիացիան տեղադրվել է պատմական Կիլիկիայում և նրա մերձակայքում, հյուսիսից՝ դեպի Կեսարիա, իսկ հարավից՝ դեպի պատմական Անտիոքի շրջանները ներառյալ:

«Հա» ճյուղը տեղադրված է եղել Հյուսիսային Միջագետքում, Եդեսիայի, Տիգրանակերտի, Մալաթիայի և Անտիոքի միջև ընկած տարածության վրա: «Կր» ճյուղը տեղադրվել է Փոքր Հայքում և Միջին Հայաստանում՝ Կարնո, Մշո և Վանի շրջաններում:

Եվ, վերջապես, վեցերորդ ասոցիացիան («Լ» ճյուղը) տեղադրվել է Կապուտան ծովի շրջակայքում, նրա արևելյան, արևմտյան և հյուսիսային ափերին:

Բացի դրանից, յուրաքանչյուր ասոցիացիայի ներսում գծագրվում են մասնավոր խմբեր, որոնք նույնպես կազմում են ամբողջություն: Այս խմբերից աչքի են ընկնում Վանա ծովի շրջակայքի բարբառները, որոնց կենտրոնը Վանի բարբառն է:

Բարբառների այդպիսի տեղադրումը ներշնչում է նոր մատնացույց նրանց ծագումն ու առաջացումը բացատրելու ուղղությամբ:

Սակայն այդ ճյուղերի հայտնաբերման շնորհիվ առաջ մղվեց մի հարց ևս: Այժմ հնարավոր եղավ կատարել բարբառների ձևաբանական նոր դասակարգում:

---

[1] Երկրորդ փաստն այս մասին հայտնաբերեց մեր ասպիրանտ Սամվել Անթոյանը, որն զբաղվեց մեր առաջարկած Կեսարիայի բարբառի ուսումնասիրությամբ: Ըստ նրա ուսումնասիրության Կեսարիայի բարբառը ժխտական ներկան կազմում է հետևյալ կերպ. չիքամ գրէմ, չիքաս գրէս, չիքա գրէ, չի քանք գրէնք, չի քաք գրէք, չի քան գրէն, չի քար գրէր ի, չի քար գրէրիր, չի քար գրէր, չի քար գրէր ինք, չի քար գրէր իք, չի քար գրէր ին: (Ս. Անթոյան, «Կա» ճյուղի մի նոր բարբառ (Կեսարիայի), Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտությունների սերիա, № 6, 1956):

Երբ երևան եկան բարբառների վեց ճյուղերը, ակներև դարձավ, որ երեք ճյուղ ունեն անալոգիկ մի կազմություն, իսկ մյուս երեք ճյուղերը՝ անալոգիկ մի այլ կազմություն: Առաջին երեք ճյուղերը, «Ում», «Լ», «Ս», ունեն վերլուծական կազմություն, այսինքն՝ իրենց ներկան կազմում են դերբայով և օժանդակ բայով (գրում եմ, կրէլ եմ, կրէս եմ): Այս ճյուղը անվանվեց հայ բարբառային ճյուղերի դերբայավոր խումբ:

Մյուս ճյուղերը՝ «Կը», «Կա», «Հա», ունեն համադրական-մասնիկավոր կազմություն, այսինքն՝ բայը խոնարհում են դրբարբի նման, բայի ներկան կազմելու համար ավելացնում են այս մասնիկներից որևէ մեկը, ուստի և դրանք կոչվեցին մասնիկավոր խումբ[1]:

Այսպիսով հայ բարբառները այժմ դասակարգվեցին հետևյալ կերպ[2].

1. Հայ բարբառների դերբայավոր խումբ, որ բաղկացած է երեք ճյուղերից՝ «Ում», «Լ», «Ս»:

«ՈՒՄ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Իրանական	Արարատյան	Էջմիածնի	Ասարխան	Շամախի	Ջուղա	
Ներկա	գ'ըրըմ էմ	կ'իրըմ ըմ	կըրըմ եմ	կ'ըրրմ ամ	գըրում ամ	փախման ամ
	» էս	» ըս	» ես	» էս	» աս	» աս
	» ա	» ա	» ա	» ա	» ա	» ա
	կասթրմ էմ	կարթրմ ըմ	կասթրմ եմ	կասթրմ ամ	կարթում ամ	գնամաև ամ
	» էս	» ըս	» ես	» էս	» աս	» աս
	» ա	» ա	» ա	» ա	» ա	» ա
Վաղակատար	գ'ըրըմ ի	կ'իրըմ ի	կըրըմ ի	կ'ըրրմ ի	գրում ի	փախման ի
	» իր	» իր	» իր	» իր	» իր	» իր
	» էր	» ար	» էր	» էր	» էր	» էր
Անցյալ	կասթրմ ի	կասթրմ ի	կասթրմ ի	կասթրմ ի	կարթում ի	գնամաև ի
	կասթրմ իր	կասթրմ իր	կասթրմ իր	կասթրմ իր	կարթում իր	» իր
	կասթրմ էր	կասթրմ ար	կասթրմ էր	կասթրմ էր	կարթում էր	» էր

[1] Հ. Աճառյանի կարծիքով Խոտրջրի բարբառը ներկան կազմում է դրբարբի նման: Այդ դեռ հարկավոր չափով ստուգված չէ: Բայց եթե դա ճշտվի, ապա ուրեմն մենք կունենանք մի նոր ճյուղ ևս՝ գրաբարակերպ ճյուղ: Սակայն այդպիսին կոչվելու համար անհրաժեշտ է, որ այդ բարբառի կողքին լինի գոնե մի երկրորդը՝ օժտված նույն հատկություններով: Հետևարար բարբառագետները դեռ անելիքներ ունեն այդ ուղղությամբ: Որոնումներ կատարելու դեռ մեծ անհրաժեշտություն կա.

Այժմ իսկ կարելի էր Արամոյի բարբառը միացնել Խոտրջրի բարբառին և առաջարկել իրրև գրաբարակերպ խումբ:

[2] Մեզանից ուշ, մեր նյութերի հիման վրա, բայց մեզանից անկախ նման դասակարգում կատարել է նաև պրոֆ. Էդ. Ագայանը:

«Ս» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Ժամանակ	Դարապաղ	Դզմար	Դելվան—Շադախ	Կարճևան	Մեղրի	Հաղբատ	Ուրմիա	Կողեն	Արզվին
Եզակի	մնալիս ըմ	մնալիս ըմ	մնալիս ըմ	մնալ լիմ	մնաս իմ	մնաս ըմ	մնաս եմ	մնաս ըմ	մնալիս իմ
	» ըս	» ըս	» ըս	մնալ լիս	» իս	» ըս	» ես	» ըս	» իս
	» ա	» ա	» ա	մնալս ա	» ի	» ա	մնալի	մնաս ա	» է
	գ'իրիլիս ըմ	գ'իրիլիս ըմ	կըրլիս ըմ	գիրիլ լիմ	գիրիս իմ	կ'ըրէս եմ	կիրէս եմ	գ'իրիս ըմ	գրէլիս իմ
	գ'իրիլիս ըս	» ըս	» ըս	գիրիլ լիս	» իս	» ըս	կիրէս ես	գ'իրիս ըս	» իս
	գ'իրիլիս ա	» ա	» ա	գիրիլս ա	» ի	» ա	կիրէլի	գ'իրիս ա	» է
Անցյալ անկատար	մնալիս ըմ լալ	մնալիս ըմ լալ	մնալիս ըմ լալ	մնալ լիմ լէ	մնաս իմ լա	մնաս ըմ նիս	մնաս եմ էր	մնէլի	մնալիս էի
	» ըս »	» ըս »	» ըս »	» լիս լէ	» իս »	» ըս նիս	» ես էր	մնէլիր	» էիր
	» ա »	» ա »	» ա »	մնալս ա լէ	» ի »	» ա նիս	մնաս էր	մնէր	» էր
	գ'իրիլիս ըմ »	գ'իրիլիս ըմ »	կիրիլիս ըմ »	գիրիլ լիմ լէ	գիրիս իմ լա	կըրէս ըմ նիս	կիրէս եմ էր	գ'իրէլի	գրէլիս էի
	» ըս »	» ըս »	» ըս »	գիրիլ լիս լէ	» իս լա	» ըս նիս	կիրէս ես էր	գ'իրէլիր	» էիր
	» ա »	» ա »	» ա »	գիրիլս ա լէ	» ի լա	» ա նիս	կիրէս էր	գ'իրէր	» էր

«Լ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Ժամանակ	Մարագա	Խոյ
	Կ'իրիլ իմ	կըրէլ եմ
	» իս	» ես
ներկա	» ի	կըրէլի
	Կ'առթալ իմ	կարթալ եմ
	» իս	կարթալ ես
	» ի	կառթալի
	Կ'իրիլ իմ էր	կըրէլ եմ էր
	Կ'իրիլ իս էր	կրէլ ես էր
անցյալի անկատար	Կ'իրիլ էր	կըրէլ էր
	Կ'առթալ իմ էր	կառթալ եմ էր
	Կ'առթալ իս էր	կառթալ ես էր
	Կառթալ էր	կառթալ էր

2. Հայ բարբառների մասնիկավոր խումբ, որ բաղկացած է նույնպես երեք ճյուղերից. «Կը», «Կա», «Հա»:

«ԿԸ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Ժամանակ	Պոլիս	Մալաթիա	Վան	Համշեն	Կարին
անկատար	գը գըրէմ	գը քըրէմ	կը կ'իրեմ	գ'ըրիմ գու	գ'ըրէմ կը
	» գըրէս	» քըրէս	կը կ'իրես	գ'ըրիս »	գ'ըրէս կը
	» գըրէ	» քըրէ	կը կ'իրի	գ'ըրա »	գ'ըրէ կը
	գը գարթամ	գը գարթամ	կը կ'առթամ	գաշդօմ գու	կարթամ կը
	» գարթաս	» գարթաս	կը կ'առթաս	գաշդաս »	կարթաս կը
	» գարթա	» գարթա	կը կ'առթա	գաշդա »	կարթա կը
մասնակցա վոնցցու	գը գըրէի	գը քըրէի	կը կ'իրի	գ'ըրէյը գու	գ'ըրէի կը
	գը գըրէիր	գը քըրէիր	կը կ'իրիր	գ'ըրէյգ(ը) գու	գ'ըրէիր կը
	գը գըրէր	գը քըրէր	կը կ'իրեր	գ'ըրէր »	գ'ըրէր կը
	գը գարթայի	գը գարթայի	կը կարթի	գաշդայը գու	կարթայի կը
	գը գարթայիր	գը գարթայիր	կը կարթիր	գաշդագ[ը] գու	կարթայիր կը
	գը գարթար	գը գարթար	կը կարթեր	գաշդար գու	կարթար կը

«ԿԱ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Ժամանակ	Բեյլան	Զեյթուն	Ավեդիս	Կեսարիա	Ամասիա
Ներկա	գա՛ կըրիմ	գու՛ կը՛յիմ	գու կրրիմ	կրիմ կա	գրիմ կա
	» կըրիս	» կը՛ուիս	» կրիս	կրիս »	գրիս »
	» կըրէ	» կը՛էլ	» կրի	կրա »	—
	գա՛ ՄԵՍ	գու՛ ՄԵՍ	գու ՄԵՍ	ՄԵՍ »	ՄԵՍ կա
	» ՄԵՍ	» ՄԵՍ	» ՄԵՍ	ՄԵՍ »	ՄԵՍ »
	» ՄԵՍ	» ՄԵՍ	» ՄԵՍ	ՄԵՍ »	—
Լուսանցք սովորական	գա՛ կըրի գի	գու՛ կը՛յայա	գու կրէր է	կրէի կա	գրէի կա
	» կըրիր գի	» կը՛յայայ	» կրէր իս	կրէիր կա	գրէիր կա
	» կըրէր	» կը՛յէյ	» կրիր	կրէր »	—
	գա՛ ՄԵՍ գի	գու՛ մը՛նայա	գու ՄԵՍ է	ՄԵՍ կա	ՄԵՍ կա
	» ՄԵՍ »	» մը՛նայայ	» ՄԵՍ իս	ՄԵՍ կա	ՄԵՍ կա
	» ՄԵՍ	» մը՛նէյ	» ՄԵՍ	ՄԵՍ կա	—

«ՀԱ» ՃՅՈՒՂԻ ԲԱՐԲԱՌՆԵՐ

Ժամանակ	Քեսաբ	Արտամ	Եդեսիա
Ներկա	հա՛ պէնեմ (բանել)	հայ հա՛մբրէյմ (համբել)	գը փանիմ ա (բանել)
	» պէնես	» համբրէյս	» փանիս ա
	» պէնա՛	» համբրէյ	» փանի յա
	հա՛ գարտամ	հայ ըմնո՛ում (ՄԵՍ)	գը գարթամ ա
	» գարտաէս	» ըմնո՛ուս	գը գարթաս ա
	» գարտաս	» ըմնո՛ս	գը գարթա յա
Լուսանցք սովորական	հա՛ պէնէր եմ	հայ համբրա՛ ա	գը փանէի ա
	» պէնէր ես	» համբրէր իս	» փանէիր ա
	» պէնէր	» համբրիր	» փանէր ա
	հա՛ գարտէր եմ	հայ ըմնա՛ ա	գը գարթալի ա
	» գարտէր ես	» ըմնէր իս	» գարթալիր ա
	» գարտէր	» ըմնիր	» գարթար ա

Բ. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմահամեմատական լեզվաբանության նախորդ շրջանում (XIX դարի վերջերին) հաստատվեց հնդեվրոպական բաղաձայնների առաջին տեղաշարժի օրենքը, որը գործել է հայերեն և գերմանական լեզուների առաջացման պրոցեսում։ Եթե նկատի ունենանք, որ հնդեվրոպական լեզուների մեծագույն մասի բաղաձայնական համակարգը ենթարկվում է բոլորովին այլ, այսպես կոչված շնչեղազրկման օրենքին (ռոմանական խումբ, սլավոնական խումբ, կելտական խումբ), ապա առաջին տեղաշարժի երևույթը հնդեվրոպական լեզուների մեջ կլինի տարօրինակ։ Սակայն, քանի որ հնդեվրոպական երկու լեզուների մեջ այդ օրենքը գործում է, հետևաբար այն առաջացել է բնական ճանապարհով և պետք է համարել հնդեվրոպական լեզուների հնչյունների զարգացման բնական օրենքներից մեկը։ Այդ օրենքը հայերենում դրսևորվում է հետևյալ կերպ[1]։

Հնդեվ.	bh	dh	g²h	g'h	b	d	g²	g¹	p	t	k²	k¹
Գրաբ.	բ	դ	գ/ջ	ձ/զ	պ	տ	կ	ծ(ճ)	հ	թ	ք	ս

dh>դ

Հնդեվր.	dhl	dhel	dheig¹h	dhur	dhukter
Իրարար	դալար	դեղ	դէգ	դուռ-ն	դուստր

d>տ

Հնդեվր.	daiver	də, do	dek'm	drwa-l	diw	dom
Գրաբար	տայգր	տա-լ	տասն	տարգալ	տիւ	տուն

t>թ

Հնդեվր.	tā, tan	tərmo	təw	tek²	tor	tum	tor	tupho
Գրաբար	թան-ալ	թարմ	թաւ	թեք-ել	թոռ-ն	թում-բ	թոր	թուփ

g²h>գ, ջ

Հնդեվր.	g²həni, g²hrs, g²her	g²helg'h	g²herdh	g²hoidhyo	ghomo
Գրաբար	գան, գարշ, ջեր	գեղձ	գերդ (-ատատան)	գէջ	գոմ

[1] Հ. Աճառյան, Արմատական բառարան։

$g^2 > կ$

Հնդեվ.	g^2alact	g^2eleno	g^2ṛg′	g^2ag^{2}rodo	g^2iya	g^2er	g^2en	go^{2}v	gurong
Դրաբ.	կաթ-ն	կագին	կարծ-ր	կարկաս	կեա-լ	կեր, կուր	կին	կով	կառնկ

$k^2 > ք$

Հնդեվր.	k^2tvr	k^2ar	k^2an	k^2oinā	k^2ema	kū
Գրաբար	քառ	քար	քան	քէն	քիմք	քուք (ոգք)

gh > ձ

Հնդեվր.	g′her, g′hers	g′hedos	g′hēr	g′hiyom	g′heim-er
Դրաբար	ձեռ-ն	ձեա	ձիր	ձիւն	ձմեռ-ն

g′ > ծ

Հնդեվր.	g′ṇ	g′er	g′en	g′en	g′onwi	g′uro
Դրաբար	ծան|աւթ|	ծեր	ծին	ծնաւտ	ծանգ ծանր	ծաս

k′ > ս, ծ

Հնդեվր.	k′awa	kama	kar	k′ṛ	k′er	k′erdi	k′eiro	k′wek′ura	k′ovro
Գրաբար	սաղ	սամիկ	սառն	սար	սիրել սեռ	սիրտ	սէր	սկեսուր	սոր

bh > բ

Հնդեվր.	bhəl, bhal	bhā	bher	bherno	bher	bher-ano	bher
Գրաբար	բալ (մշուշ)	բա-ս	բիր	բեռն	բերբի, բերեմ	բերան	բիր

Հնդեվր.	bhoso′	bhug′	bhor	bho-sk	bhordh	bhu
Գրաբար	բակ	բոյծ	բոռ	բոց	բարդ	բուք

b>պ

Հնդեվր.	bel	bendh	bud	bud	bul	bul
Գրաբար	պեղել	պինդ	պուտ (բշտիկ)	պատկ (ծիլ)	պպլուկ (ծիլ)	պղպջակ

p>ph>հ, փ

Հնդեվր.	pəter	per	pedo	pun	pol	pou	pont	puro
Գրաբար	հայր	հեռի	հետք	հնոց	հող	հով	հուն	հուր

Հնդեվր.	(s) pinə
Գրաբար	փին

Ինչպես երևում է բերված ողջուսակից, առաջին անդաշարժի օրենքը հայերենում դրսևորվում է միանգամայն հետևողականորեն, որը և վկայում է, թե դա լեզվի ներքին օրենքն է: Իհարկե, այժմ հայերեն լեզուն այլևս չունի այդ օրենքը, բայց հնդեվրոպական նախալեզվից հայերեն դառնալու ընթացքում այն շատ հետևողական դեր է խաղացել:

Առաջին անդաշարժի օրենքի հետևանքով կազմվել է հին հայերեն լեզվի բաղաձայնական համակարգը՝ հետևյալ ձևով.

bh b p ph dh d t th g²h g² k² k²h
↓ ↓ ↓
բ պ փ(հ) դ ա թ գ կ ք

Այս համակարգը, շատ փոքրիկ շեղումներով, գոյություն ունի նաև այժմյան արևելահայ գրական լեզվի մեջ հայերենի «Ս» ճյուղի վեց բարբառներում (Սեղրի, Կարճևան, Ղարադաղ, Դզմար, Կոզեն, Արդվին), նաև Ագալեսի, Թրիլիսիի և Հավարիկի միջճյուղային բարբառներում: «Ս» ճյուղը դրանվում է պատմական Գողթանից դեպի արևելք ընկած տարածության վրա և Արաքս գետի երկու ափերին, այսինքն՝ պատմական Հայաստանի արևելյան մի հեռավոր փոքրիկ հատվածում:

Հայաստանի ամբողջ տերիտորիայի վրա ընկած հայ բարբառների մեջ այդ օրենքը գործել է բոլորովին այլ ձևով և չի տվել նույն հետևանքը, ինչ որ տվել է նա գրաբարի կամ «Ս» ճյուղի բարբառներում:

Հայերենի բարբառների պայթյական բաղաձայնական համակարգի ուսումնասիրությունը և դրա հետևանքով՝ բարբառների հնչյունական դասակարգումը տվեցին հետաքրքրական արդյունքներ: Պարզվեց հետևյալը.

1. Փոքր Հայքի և նրա շրջակայքի, հատկապես Եփրատի արևմտյան ափին, մասամբ նաև արևելյան ափին գտնված բարբառներում (Արարկիր, Ամն, Շապին-Կարահիսար, Սեբաստիա, Համշեն) բաղաձայնական համա-

կարգը ունի երեք աստիճան առանց պարզ խուլ հնչյունների. այսպես՝ bh>բ՛, b>բ, p>փ և ph>փ, նույնպես և՝ dh>դ՛, d>դ, t>թ, th>թ, g^2h>գ՛, g^2>գ, k^2>ք, k^2h>ք։

Հնդեվր.	bher	bend	dhur	dek′m	tor	g^2hom	g^2alact	k^2ar
I խմբի բարբառ.	բ՛երեմ	բինդ	դ՛ուռ	դաս	թոռ	գ՛օմ	գալթ	քար

Ինչպես տեսնում ենք, պահպանված է հնդեվրոպական ամբողջ համակարգը, բացի խուլերից։ Դիտենք, որ հնդեվրոպական պարզ խուլ հնչյունները չկային նաև գրաբար լեզվի մեջ։ Ինչպես վերևում տեսանք, գրաբարում եղած պարզ խուլերի շարքը առաջացել է հնդեվրոպական պարզ ձայնեղ շարքից մեկ տեղաշարժի հետևանքով։ Այս խմբում այդ տեղաշարժը տեղի չի ունենում, բայց խուլերի տեղաշարժը դեպի շնչեղ խուլերի շարքը կատարվում է։ Խուլերի տեղաշարժ կատարվում է նաև մյուս բարբառներում։ Ուստի առանց վերապահության կարող ենք ասել, որ ամբողջ հայերեն լեզվի մեջ հնդեվրոպական պարզ խուլերը տեղաշարժված են խուլ շնչեղների շարքը, այսինքն՝ հայերեն լեզուն իր բոլոր բարբառներով կորցրել է հնդեվրոպական պարզ խուլերը՝ վերածելով դրանք շնչեղ խուլերի։

Եփրատից արևմուտք կամ Փոքր Հայքում գտնվող բարբառների խմբի եռաստիճան համակարգը կազմված է շնչեղ ձայնեղներից, մաքուր պարզ ձայնեղներից և շնչեղ խուլերից. դրանք բոլորը նույնն են հնդեվրոպականի հետ։ Նշանակում է՝ Հայաստանի արևմտյան և Հայաստանից դեպի արևմուտք գտնվող հայ բարբառներում, հիմնականում Փոքր Հայքի բարբառներում, հնդեվրոպական բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժը կատարվել է միայն պարզ խուլերի նկատմամբ, իսկ մյուս շարքերի նկատմամբ տեղաշարժ կատարված չէ։

2. Բարբառների այն խումբը, որ գտնվում է պատմական Հայաստանի կենտրոնական մասում, ունի բաղաձայնական համակարգի հետևյալ պատկերը.

բ՛	բ	պ	փ
դ՛	դ	տ	թ
գ՛	գ	կ	ք

Այս համակարգի շնչեղ խուլերը նույնն են առաջին խմբի հետ։ Այստեղ շնչեղ ձայնեղները միանգամայն զուգադիպում են հնդեվրոպական նախալեզվի շնչեղ ձայնեղների շարքին.

Հնդեվրոպ.	bher	dhur	g^2hom
Հայերենի II խմբի բարբառ.	բ էրէմ	դ՛ուռ	գ՛օմ

Ձայնեղները հանդիպում են միայն բառամիջում ու բառավերջում և զուգադիպում են հնդեվրոպական ձայնեղների շարքին.

Հնդեվրոպ.	bend	bud	pod	dig	. dek'm
Հայերենի II խմբի բարբառ.	պինդ	պուդուգ	օդ (ոտք)	տիգ	տասը

Խուլերը հանդիպում են միայն բառասկզբին (պուդուգ, տիգ, տասը) և զուգադիպում են հնդեվրոպական ձայնեղներին:

Այս համակարգի մեջ բացակայում են հնդեվրոպական պարզ խուլերը, որոնք, ինչպես առաջին խմբի մեջ, տեղաշարժվել են շնչեղ խուլերի շարքը:

Այսպիսով՝ Հայաստանի կենտրոնական բարբառներում բաղաձայնական համակարգը պահպանել է հնդեվրոպական շնչեղ ձայնեղների շարքը ամբողջությամբ, հետևաբար չէր կարող առաջանալ գրաբարից: Ուրեմն առաջին տեղաշարժի օրենքը կիրառվել է հնդեվրոպական պարզ խուլերի նկատմամբ և հնդեվրոպական պարզ ձայնեղների նկատմամբ՝ միայն բառասկզբին:

Հայերենի բաղաձայնական համակարգի զարգացման մեջ այս բարբառների համակարգը պարզապես բռնում է հաջորդ տեղը Փոքր Հայքի բարբառների համակարգից հետո: Ուրեմն կարելի է ասել, որ հնդեվրոպական բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժի օրենքը շարունակել է գործել և կիրառվել է բաղաձայնների նկատմամբ միայն բառասկզբին, երբ Փոքր Հայքի բաղաձայնական համակարգը տեղափոխվել է Կենտրոնական Հայաստան: Այդ նշանակում է՝ պետք է ենթադրել, որ հայերի մուտքը և տարածումը Կենտրոնական Հայաստան զուգակցվել է նրանց լեզվի հնչյունական կազմի մեջ կատարվող մեկ փոփոխությամբ՝ առաջին տեղաշարժի օրենքի տարածմամբ բաղաձայնական համակարգի ձայնեղների վրա բառասկզբում:

3. Բարբառների արևմտյան խումբը, որ ցրված էր Փոքր Ասիայի արևմուտքում, Սև ծովի հարավային ափերին մինչև Մարմարա ծովը և Փոքր Հայքից արևմուտք ընկած տարածության վրա, ունի բաղաձայնական հետևյալ համակարգը.

bh>բ, dh> դ, g²h>գ
b>բ, d>դ, g²>գ
p>փ(հ), t>թ, k²>ք

Հնդեվրոպ.	bher—	bend	dhur	dek'm	tor	g²hom	g²alakt	k²ar
Հայ բարբ. III խումբ	բէրէմ	բինդ	դուռ	դաս	թօռ	գօմ	գալթ	քար

Այս համակարգը հնդեվրոպական պարզ խուլերը հայերենի բոլոր բարբառների նման տեղաշարժել է շնչեղ խուլերի շարքը, իսկ հնդեվրոպական շնչեղ ձայնեղները՝ պարզ ձայնեղների շարքը, և դրա հետևանքով առաջացել

է բաղաձայնական մի համակարգ, որը բաղկացած է ձայնեղներից և շնչեղ խուլերից։ Ըստ որում այս խմբի ձայնեղները ներկայացնում են հնդեվրոպական պարզ ձայնեղները նույնությամբ և հնդեվրոպական շնչեղ ձայնեղները՝ տեղաշարժված ձայնեղների կարգը։ Այս հարցում բարբառների տվյալ խումբը կրել է նույնպիսի փոփոխություններ, ինչ որ սլավոնական և ռոմանական լեզուների բաղաձայնական համակարգը, բայց այդ փոփոխությունը հայերենում վերաբերում է միայն հնդեվրոպական շնչեղ ձայնեղների խմբին։

Բարբառների սույն խմբի բաղաձայնական համակարգը դրաբարից առաջանալ չէր կարող, քանի որ դրաբարը հնդեվրոպական ձայնեղները դարձրել է պարզ խուլ, մինչդեռ սրա բարբառները պահպանել են հնդեվրոպական պարզ ձայնեղների խումբը։ Այս խումբը ևս կարող է առաջացած լինել միմիայն Փոքր Հայքի բաղաձայնական համակարգից շնչեղ ձայնեղների տեղաշարժով։

4. Բարբառների չորրորդ խումբը, որ տարածվում է Կիլիկիայում և Անտիոքի շրջանի գյուղերում, կատարել է հնդեվրոպական պարզ խուլերի տեղաշարժ, ինչպես նաև հնդեվրոպական շնչեղ ձայնեղների տեղաշարժ երկու անգամ՝ դարձնելով նրանց պարզ ձայնեղ, ապա խուլ։ Այս խումբը ևս անփոփոխ պահպանել է հնդեվրոպական պարզ ձայնեղների ամբողջ շարքը։ Այսպիսով՝ բարբառների չորրորդ խումբը ունի բաղաձայնական համակարգի երեք աստիճան. ա) ձայնեղներ, որոնք նույնն են հնդեվրոպականի հետ՝ b>բ, d>դ, g^2>գ. բ) խուլեր, որոնք երկու տեղաշարժի հետևանքով առաջացել են հնդեվրոպական շնչեղ ձայնեղներից՝ bh>b>պ, dh>d>տ, g^2h>g^2>կ. գ) շնչեղ խուլեր, որոնք առաջացել են հնդեվրոպական խուլերից և շնչեղ խուլերից՝ kar>khar քար։

Այս համակարգի բարբառները նույնպես չէին կարող դրաբարից առաջանալ, որովհետև դրանք ևս պահպանել են հնդեվրոպական ձայնեղները, մինչդեռ դրաբարը ձայնեղները տեղաշարժել է խուլերի շարքը։ Նախորդի նման այս համակարգը ևս կարող էր առաջանալ Փոքր Հայքի հայերենի բաղաձայնական համակարգից։

5. Բարբառների մի մեծ խումբ, որը բռնում է Հյուսիսային Միջագետքը և Հարավ-Արևմտյան Հայաստանը, հիմնականում Մալաթիայի, Տիգրանակերտի ու Եդեսիայի միջև ընկած տարածությունը, բաղկացած՝ Եդեսիայի, Տիգրանակերտի, Մալաթիայի բարբառներից, ունի բաղաձայնական հետևյալ համակարգը.

բ — փ
դ — թ
գ — ք

Այս համակարգի ձայնեղները հնդեվրոպական ձայնեղների հետ նույնն են, և սրանք պահպանված են հարազատությամբ, օրինակ՝ bend>բինդ, dek'm>դասը, g^2alact>գաթ։

Շնչեղ խուլերը առաջացած են հնդեվրոպական պարզ խուլ հնչյուններից մեկ տեղաշարժով և հնդեվրոպական շնչեղ ձայնեղներից՝ երեք տեղաշարժով, երբ շնչեղ ձայնեղները վերածվում են ձայնեղների, ապա խուլերի և հետո շնչեղ խուլերի, bher>ber>per>փերեմ, dhur>dur>tur>թուռ, g^2hom>>gom>kom>քոմ։

Այս երեք տեղաշարժերը կարող են տեղի ունենալ մեկ ակտով, թեև մենք պայմանականորեն այդ պատկերացնում ենք որպես երեք տեղաշարժ։

Շնչեղ ձայնեղներից շնչեղ խուլ կստացվի, եթե շնչեղ ձայնեղները դարձվեն իրենց ձայնեղ տարբերից (bh>ph, dh>th, $g^{2}h>k^{2}h$).

Բարբառների այս խումբը ևս մաքրությամբ պահպանել է հնդեվրոպական պարզ ձայնեղները, ուրեմն և չէր կարող առաջացած լինել գրաբարի համակարգից, որը պարզ հնդեվրոպական ձայնեղները տեղաշարժել է խուլերի:

Հետևաբար այս համակարգը ևս առաջացել է Փոքր Հայքի համակարգից, որի մեջ կատարվել է մեկ փոփոխություն՝ շնչեղ ձայնեղների ձայնեղ տարրը կորել է, որից ստացվել են շնչեղ խուլեր և այդ բարբառների ամբողջ բաղաձայնական համակարգը:

Այսպիսով, մենք նկատեցինք, որ Փոքր Հայքից արևմուտք, արևելք, հարավ-արևելք և հարավ ընկած բոլոր հայ բարբառների բաղաձայնական համակարգը առաջացել է Փոքր Հայքի բաղաձայնական համակարգից՝ մեկ, երկու, երեք մասնակի տեղաշարժերի միջոցով, տեղաշարժեր, որոնք շոշափել են շնչեղ ձայնեղների և պարզ խուլերի շարքը և չեն դիպել հնդեվրոպական ձայնեղների շարքին, որը պահպանվել է այդ բոլոր բարբառներում:

Դա ողղակի մատնացույց է անում, որ հայերեն լեզուն դեպի իր շրջապատը, իր հարևան տերիտորիաները, այդ թվում նաև դեպի Հայաստանի կենտրոնական տերիտորիան, տարածվել է Փոքր Հայքից: Այդ տարածման պրոցեսում դանդաղ չափերով և առումներով գործել է հնդեվրոպական առաջին տեղաշարժի օրենքը:

Այդ օրենքը դանդաղ խմբի բարբառների բաղաձայնական համակարգի վրա տարածվել է դանդաղ չափերով և ոչ միահավասար, հատկապես Հայաստանից դուրս գտնված բարբառների վրա չի տարածվել առաջին տեղաշարժի օրենքը հնդեվրոպական պարզ բաղաձայնների նկատմամբ, որոնք մնացել են հարազատությամբ: Կենտրոնական Հայաստանում հայերեն լեզուն առաջին տեղաշարժի օրենքը նախապես ընդունել է միայն հնդեվրոպական ձայնեղների վրա բառասկզբում:

Երբ հնդեվրոպական առաջին տեղաշարժի օրենքը Կենտրոնական Հայաստանի շրջանում սկսել է գործել հնդեվրոպական ձայնեղների նկատմամբ նաև բառասկզբում, դրա հետևանքով հնդեվրոպական ձայնեղները վերածվել են խուլերի: Երբ նույն համակարգում առաջին տեղաշարժի օրենքը ներգործել է շնչեղ ձայնեղների կարգի վրա՝ վերածելով նրան ձայնեղների, ստացվել է գրաբար լեզվի բաղաձայնական համակարգը. այստեղ առաջին տեղաշարժի օրենքը գործել է ամբողջությամբ և հետևողականորեն: Հետևաբար գրաբարի բաղաձայնական համակարգը առաջացել է Հայաստանի կենտրոնական բարբառների համակարգից, երբ առաջին տեղաշարժման հնդեվրոպական օրենքը տարածվել է ձայնեղների վրա նաև բառամիջում և շնչեղ ձայնեղների վրա ամենուրեք: Այսպիսով գրաբարի բաղաձայնական համակարգի առաջացումը տեղի է ունեցել շնորհիվ Հայաստանի կենտրոնական նահանգներում խոսվող հայերենի համակարգի վրա առաջին տեղաշարժի օրենքի հետևողական տարածման:

Ուրեմն՝ կասկած չկա, որ գրաբար լեզվի բաղաձայնական համակարգը առաջացել է այն ժամանակ, երբ հայերեն լեզուն խոսվել է Հայաստանի կենտրոնական նահանգներում համատարած կերպով, և այդ շրջանում հայերեն լեզվի բաղաձայնական կազմի հետագա փոփոխությունները տվել են այդ արդյունքը:

Ինչպես վերևում հիշատակեցինք, գրաբարի բաղաձայնական համակարգի հետ նույնն է միայն «Ս» ճյուղի բարբառների մեծ մասի համակարգը. ուրեմն՝ վերջինս կամ յուրացված է գրաբարից նույնությամբ, այսինքն՝ ծագում է գրաբարից, կամ թե՝ գրաբարի նման առաջացել է հայերենի կենտրոնական նահանգների բաղաձայնական համակարգից, որ նշանակում է, թե այդ համակարգը գրաբարի հետ միասին է գոյացել:

6. Բարբառների մի մեծ խումբ, որի մեջ են մտնում Ղարաբագի, Շամախու, Աստրախանի, Թավրիզ-Մազդոկի, Հադրութի, Շաղախի, Ուրմիայի, Մարազայի, Խոյի և Վանի բարբառները, ունեն բաղաձայնական համակարգի հետևյալ պատկերը. պ—փ, տ—թ, կ—ք, ծ—ց, ճ—չ:

Բաղկացած լինելով միայն խուլերից և շնչեղ խուլերից, այս համակարգը առաջացել է հետևյալ կերպ.

1. Համակարգի խուլ հնչյունները առաջացել են հնդեվրոպական շնչեղ ձայնեղներից երկու տեղաշարժի միջոցով՝ bh > b > պ և ձայնեղներից՝ մեկ տեղաշարժի միջոցով b > ւ:

Հնդեվրոպ.	bher	bend	dhur	dek'm	tor	g²hom	galact	k²ar
Հայ բարբ. VI խումբ	պերեմ	պինդ	տուռ	տաս	թոռ	կամ (կ'ամ)	կաթ	քար

Հնդեվրոպական պարզ խուլերը վերածվել են շնչեղ խուլերի:

Այս համակարգը միակն է, որը, հավանական է, առաջացել է գրաբարի բաղաձայնական համակարգի տիպից, այսինքն՝ տեղաշարժի օրենքը շարունակել է հետևողականորեն տարածվել և, երբ այդ տեղաշարժի օրենքը տարածվել է նաև գրաբարի ձայնեղների վրա, այսինքն՝ տեղի է ունեցել երկրորդ տեղաշարժը, առաջացել է այս համակարգը:

Դրանից հետո հեշտ է եզրակացնել, որ Փոքր Հայքի Եպոխայի հայերենի բաղաձայնական համակարգը, ենթարկվելով ատիճանաբար առաջին տեղաշարժին, անցնում է Կենտրոնական Հայաստանի հայերենի համակարգի վրայով դեպի գրաբարի համակարգը և շարունակելով հանդում է արևելյան բարբառների՝ երկատիճան ձայնեղաղուրկ համակարգին:

Միաժամանակ դրանից պարզ երևում է, որ հայերեն լեզուն հետևողականորեն ընթացել է արևմուտքից դեպի արևելք, ճանապարհին զանազան տեղերում թողնելով իր պատմական զարգացման տարբեր փուլերի վկաները՝ հանձինս հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերի:

Զուգընթացաբար պարզ է դառնում, որ հայերեն լեզուն, բացի այդ գլխավոր պողոտայից, ընթացել է նաև կողմնակի արահետներով, նորից սկիզբ վերցնելով Փոքր Հայքից և տարածվելով դեպի Հայաստանի մերձակա գավառները՝ Հյուսիսային Միջագետք, Հյուսիսային Ասորիք, Կիլիկիա, Փոքր Ասիայի կենտրոն, արևմուտք և հյուսիս, սակայն հայերեն լեզվի տարածման գլխավոր պողոտան, այնուհանդերձ պողոտան անցնում է Փոքր Հայքից Հայաստանի կենտրոնական տերիտորիայի վրայով դեպի արևելք:

Այդ ամենը նշանակում են, թե գրաբար լեզվի հնչյունական համակարգը համեմատաբար ուշ գոյացում է: Հայերեն լեզուն առաջին հազա-

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ԱՌ 1915 Թ.)


ՍԵՎ ԾՈՎ
ՄՈՐԵ
ՍՍՀՄ
ՍՍՀՄ
ՍՍՀՄ

5. Առաջին տեղաշարժի օրենքն ամբողջությամբ գործել է միայն սահմանափակ տերիտորիայում, հետևողականորեն կիրառվելով հայերեն ընդհանուր լեզվի մեջ, հանգեցնելով այն դրարարի համակարգին, և շարունակել է պահպանվել ժամանակակից արևելյան դրական լեզվի մեջ:

6. Հայերեն բարբառների ճնշող մեծամասնության մեջ այդ օրենքը շատ շեղումներ է տվել, հաճախ շատ սահմանափակումներ: Նա չի տարածվել հատկապես հնդեվրոպական ձայնեղների վրա, որոնք պահպանվել են հայերենի բարբառների մեծ մասում:

7. Փոքր Հայքի բարբառների բաղաձայնական համակարգի մեծ հարազատությունը հնդեվրոպական նախալեզվի համակարգին վկայում է, որ հայ բարբառների բաղաձայնական համակարգի այդ տարբերակը ամենահինն է. այստեղից են սկսվում հայերեն լեզվի բոլոր բարբառների, ինչպես և հին հայերենի բաղաձայնական համակարգի տարբերակների գոյացումները:

8. Միաժամանակ դա վկայում է, որ հայերեն լեզուն Հայաստանի մեջ և Հայաստանի հարևան շրջաններում տարածվել է Փոքր Հայքից, որևմն և հայերեն լեզվի հնագույն հայրենիքը, հնդեվրոպական նախալեզվից անջատվելուց հետո, եղել է Փոքր Հայքը:

9. Երբ հայերեն լեզուն հնդեվրոպականից տարբերակվելով հասել է *Փոքր Հայք և հաստատվել այնտեղ, նրա մեջ կատարվել է առաջին տեղաշարժի օրենքը միայն հնդեվրոպական պարզ խուլերի նկատմամբ:*

10. Հայերենի տարածումը պատմական Հայաստանի տերիտորիայում ու նրա մերձակա շրջաններում միաժամանակ հանդիսացել է նաև առաջին տեղաշարժի օրենքի գործուն ժամանակաշրջանը՝ հնդեվրոպական նախալեզվի ձայնեղների և շնչեղ ձայնեղների նկատմամբ:

11. Հայ բարբառների մի զգալի մասում գործել է ոչ միայն առաջին տեղաշարժի օրենքը, այլև տեղաշարժի երկու, երբեմն երեք օրենք, բուն որում այդ ամենը շոշափել են մեծ մասամբ շնչեղ ձայնեղները:

12. Բարբառների երկու խմբերում տեղաշարժի օրենքը շոշափել է նաև ձայնեղները:

ОСНОВНЫЕ ИТОГИ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ РАБОТ ПО АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

А. С. ГАРИБЯН

(Резюме)

В статье подводится итог всей научно-исследовательской работы по армянской диалектологии за советский период. Отмечается, что работа по армянской диалектологии развернулась во всю широту благодаря тому, что после установления Советской власти в Армении впервые были созданы научно-исследовательские центры по арменистике, а именно: кафедры армянского языка в Ереванском государственном университете, в Армянском государственном педагогическом институте имени Х. Абовяна и в других педагогических вузах и Институт языка в системе Академии наук Армянской ССР. За это время были выявлены

26 новых диалектов, неизвестных науке. В этих новых диалектах обнаружились новые лингвистические качества армянского языка, вследствие чего и была пересмотрена дореволюционная классификация армянских диалектов. Были выявлены три новые ветви армянских диалектов, и в результате этого все 57 диалектов армянского языка распределились в 2 группах: в группе **с деепричастным образованием** настоящего времени глаголов и в группе **образования с частицей.**

В первую группу входят 3 диалектные ветви, определяемые по признаку образования настоящего времени изъявительного наклонения:

а) ветвь „ум“ (гәрум ем — я пишу);
б) ветвь „с“ (гәрелис им — я пишу);
в) ветвь „л“ (кәрел ем — я пишу).

Во вторую группу входят также 3 диалектные ветви, определяемые по тому же признаку:

а) ветвь „кә“ (кә гәрем — я пишу);
б) ветвь „ка“ (ка гәрим — я пишу);
в) ветвь „ha“ (haй кәрейм — я пишу).

В статье указывается, что сопоставительному изучению подвергся также консонантизм армянского языка и его диалектов сравнительно с индоевропейским исходным положением. Обнаружилось, что давно известное науке **первое** передвижение взрывных согласных отражается по-разному в консонантизме разных диалектов. Обнаружились **первое, второе** и **третье** передвижения рядов консонантной системы индоевропейского праязыка в армянских диалектах, и в результате этого по признаку системы взрывных согласных получалось **семь** групп диалектов. Эти результаты показали, что в армянском языке 11 диалектов имеют консонантный ряд **звонких придыхательных,** совпадающих с тем же рядом индийских языков. А это делает неоспоримым то утверждение науки, что индоевропейский праязык обладал этим рядом взрывных согласных.

Второе заключение, которое можно было сделать, формулируется следующим образом: географическое расположение консонантных групп диалектов армянского языка доказывает, что система согласных диалектов Малой Армении стоит ближе всего к индоевропейскому первосостоянию. От этой системы произошли все другие консонантные группы, а консонантизм древнеармянского языка произошел от консонантной системы диалектов Центральной Армении.